


ԱՐՄԱՆՈՒՇ ԿՈԶՄՈՅԱՆ. Իրանագիտական հետազոտություններ, *Երևան, «Գիտություն» հրատ., 2024, 460 էջ**:

Բանալի բառեր՝ Ա. Կոզմոյան, իրանագիտական հետազոտություններ, հոգվածներ, գրախոսություններ, ժողովածուներ:

Իրանական չափածո և արձակ գրականության, ժողովրդական բանահյուսության ու էպիկական երկերի ուսումնասիրության գործին անմասն չի մնացել նաև արևելագիտության հայաստանյան դպրոցը, և դրանով ավանդված գրականության ուսումնասիրությունը եղել է դասական բանասիրության հայ նշանավոր դեմքերի ուշադրության կենտրոնում:



ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արմանուշ Կոզմոյանը գիտական գործունեությունը սկսել է 1970-ական թվականներին և ԽՍՀՄ փլուզումից հետո շարունակել է ստեղծագործել՝ իր ավանդն ունենալով անկախ Հայաստանում իրանական գրականության ուսումնասիրողների նոր սերնդի պատրաստման գործում:

Վերջերս լույս տեսած Ա. Կոզմոյանի «Իրանագիտական հետազոտությունները» տարիների ընթացքում հրատարակած հոգվածների և գրախոսությունների համահավաք ժողովածուն է, որտեղ ընդգրկված են հեղինակի արժեքավոր և իրանական գրականության ուսումնասիրությունների համատեքստում արդիական այնպիսի աշխատանքներ, որոնք ժամանակին հայերենով և ռուսերենով տպագրվել են հայաստանյան ու արտասահմանյան հեղինակավոր պարբերականներում (ՀԽՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», «Պատմաբանասիրական հանդես», «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», «Իրանագիտության հարցեր», «Իրան-նամե», «Народы Азии и Африки», «Письменные памятники Востока» և այլն), ինչպես նաև ժողովածուներում [օրինակ՝ «Вопросы восточного литературоведения. Традиции и современность (сборник статей)», «Неизменность и новизна художественного мира. Памяти Е. Э. (сборник статей)», «Григор Нарекаци и духовная культура средневековья (сборник статей)»]:

* Ներկայացվել է 10. VI. 2024 թ., ընդունվել է տպագրության 21. IX. 2024 թ.:

Ա. Կոզմոյանի այս կարևոր հրատարակության մեջ ընդգրկված է նաև Իրանի մշակույթի ու պարսից միջնադարյան գրականության վերաբերյալ հոգվածը, որը որպես առանձին գլուխ 2016 թ. լույս է տեսել «Հայաստանի հարակից երկրների պատմություն» ակադեմիական շարքի երկրորդ հատորում:

Նկատենք, որ գիրքը տպագրվել է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ, խմբագիրներն են՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ա. Խառատյանը, պ. գ. թ. Կ. Ավետյանը, գրախոսներն են՝ պրոֆ. Ք. Կոստրիկյանը, դոց. Գ. Գևորգյանը, կազմել է պ. գ. թ. Կ. Ավետյանը:

Իրանական գրականության ուսումնասիրության հայաստանյան դպրոցի փորձին ծանոթ յուրաքանչյուր մասնագետ, թերթելով Ա. Կոզմոյանի «Իրանագիտական հետազոտությունները» կամ պարզապես ուսումնասիրելով նրա աշխատանքների մատենագիտությունը, որը նույնպես ներառված է այս ժողովածուի մեջ (տե՛ս էջ 14–25), անմիջապես կնկատի մի կարևոր հանգամանք. բազմաթիվ են թեմաները, որոնց ուսումնասիրության հարցում Ա. Կոզմոյանն եղել է առաջինը մեր իրականության մեջ և, ցավալիորեն, մնացել է մենակ կամ բառի գիտական իմաստով «անժառանգ» այդ թեմաներից շատերի դեպքում: Ասվածի լավագույն օրինակներից է վաղ և միջին դասական պարսկերենով ավանդված քառյակների (ռութայի) կառուցվածքային, ոճական և տաղաչափական առանձնահատկությունների ակադեմիական ուսումնասիրությունը և Իոսիֆ Բրագինսկիի դպրոցի* լավագույն ավանդույթների կիրառումը [տե՛ս, օրինակ, «Рубаи в творчестве Фаррухи» (էջ 26–33), «Развитие усложненного стиля в любовных четверостишиях Унсури» (էջ 34–39), «Характеристика городского рубаи 12 в. на фарси» (էջ 46–55), «Проявление новых тенденций в развитии рубаи» (էջ 56–63) և այլն]: Նույնը վերաբերում է նաև Ղուրանի հայ միջնադարյան ձեռագիր թարգմանությունների ուսումնասիրությանը, որի հարցում նույնպես մեծ է Ա. Կոզմոյանի ավանդը, և ուրախալիորեն այդ հարցում նրա ներդրումն ի ցույց դնող աշխատանքները ևս ներառված են հեղինակի այս նոր՝ համահավաք ժողովածուի մեջ [տե՛ս, օրինակ, «Средневековые армянские переводы Корана в рукописях Матенадарана» (էջ 274–279), «Ղուրանի միջնադարյան ձեռագիր թարգմանությունների խնդրի շուրջ» (էջ 288–297), «Իսլամի Սուրբ գիրքը թարգմանական զարգացումներում» (էջ 302–309) և այլն]:

Արժեքավոր ու կարևոր է նաև այն, որ խնդրո առարկա ժողովածուի մեջ տեղ են գտել Ա. Կոզմոյանի այն ուսումնասիրությունները, որոնք ունեն միջգիտակարգային բնույթ և գտնվում են համեմատական գրականագիտության,

* Ա. Կոզմոյանը, 1971–1974 թթ. սովորելով Մոսկվայի արևելագիտության ինստիտուտի ասպիրանտուրայում՝ իրանագետ–միջնադարագետ մասնագիտացմամբ, եղել է Հայտնի արևելագետ, պրոֆ. Իոսիֆ Բրագինսկիի ասպիրանտը և նրա ղեկավարությամբ 1976 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ «Формирование рубаи в классической поэзии на фарси (10–12 вв.)» թեմայով: Դոկտորական ատենախոսությունը պաշտպանել է 1996 թ. արդեն Երևանում՝ «Հայ և պարսից միջնադարյան քնարերգության համեմատական պոետիկան (10–16-րդ դդ.)» թեմայով:

Հայագիտության, իրանագիտության, ռասական աղբյուրագիտության և միջնադարանագիտության հատույթում [տե՛ս, օրինակ, «Հայկական և պարսկական միջնադարյան սիրային քնարերգության տիպաբանական առանձնահատկությունների մասին» (էջ 64–73), «Նմանակության գեղագիտական ֆենոմեններ Հայ և պարսից միջնադարյան պոեզիայում» (էջ 156–159), «Հայոց և պարսից միջնադարյան քնարերգության համեմատական պոետիկան (Հայրեն և քառյակ)» և այլն]:

Ա. Կոզմոյանն անհաղորդ չի եղել նաև դեռևս խորհրդային տարիներից ծավալված աղբյուրաբանական կեղծ գիտական թեզերի և իրանական գրականության պատմության ոլորտում իրականացված գեղծարարությունների դեմ պայքարին, և դրա շրջանակներում է եղել իրանական գրականության Հայ մասնագետի կենտրոնացումը նիզամիագիտության որոշ ուղղությունների վրա: Ընդ որում, այս թեմատիկային վերաբերող գիտահրապարակախոսական հոդվածների ներառումը «Իրանագիտական հետազոտություններում» [տե՛ս, օրինակ, «Մշակութային կոդոպոլսո կամ պատասխան Արիֆ Հաջիևին» (էջ 74–87)] կարևոր է ոչ միայն այսօր այդ թեմայի չափազանց արդիական լինելու համատեքստում, այլ նաև 1980-ականների՝ այս ոլորտին հատուկ ներխորհրդային ակադեմիական պոլեմիկան, ի մասնավորի միութենական երկու հարևան պետությունների ակադեմիաներում և համալսարաններում Նիզամի Գանձակեցու, նրա պոեզիայի առանցքային կերպարների մի մասի ազգային պատկանելության և հարակից այլ խնդիրների շուրջ ծավալված խոսույթը հասկանալու դիտանկյունից:

Ամփոփելով կրկին նշենք, որ Կոզմոյանի՝ իրանական գրականության ուսումնասիրությունների ոլորտում իրականացրած ուսումնասիրությունների մի մասն (հոդվածներ և գրախոսություններ) ամփոփող «Իրանագիտական հետազոտություններ» ժողովածուն կարևոր ձեռքբերում է: Դրա շնորհիվ թե՛ մասնագիտական հանրույթի, թե՛, առհասարակ, իրանական գրականությանը հետաքրքրվող ընթերցողների լայն շրջանակների համար ավելի հասանելի են դարձել Արմանուշ Կոզմոյանի ակադեմիական գործունեության տասնամյակների ընթացքում իրականացրած արժեքավոր ուսումնասիրությունները:

ՎԱՐԴԱՆ ՈՍԿԱՆՅԱՆ

Բ. Գ. Թ., պրոֆ., ԵՊՀ իրանագիտության ամբիոնի վարիչ: Գիտական հետաքրքրությունները՝ իրանական լեզվաբանություն և բարբառագիտություն, Իրանի պատմություն և մշակույթ, Հայ-իրանական, արևելյան լեզուներ և մշակույթներ: Հեղինակ է 5 մենագրության ու ձեռնարկի և շուրջ 60 հոդվածի:
ORCID:0009-0003-4280-4234. vardan.voskanian@ysu.am